էլ-Աբուաբնահանդի իշխանաց հետ, Մրբվան յարձակեցաւ Սլաւոնների վերայ, որոնք Խազարաց երկրում էին, գերեց նոցանից 10.000 ընտանիք եւ բնակեցրեց նոցա Կախեթում։ Բայց Սլաւոնք՝ սպանելով իրանց կառավարչին՝ փախան, եւ Մրբվան, հետամուտ լինելով, սրի մատնեց նոցա։ Երբ եկաւ Խազարաց իշխանը ահագին բազմութեամբ, որ Մրբվան, նուաճել էր, թափելով նոցա երկիրը եւ ջլատելով նոցա զէնքի զօրութիւնն, այս բանը լքացրեց նորան եւ երկիւղով լեցրեց նորա սիրտը։ Երբ Խազարը Մրբվանին մօտեցաւ, սա նորան պատգամ ուղարկեց, որ նորան կամ խաղամ ընդունելու եւ կամ կռուի հրաւիրէ. նա պատասխանեց՝ "ես կընդունեմ խաղամ, ուստի ուղարկիր ինձ մօտ մէկին, որ ինձ ուսուցանէ"։ Եւ նա նորան մարդ ուղարկեց, որ ուսոյց նորան։ Ապա Մրբվան՝ դաշն կապելով նորա հետ՝ նորան իւր տէրութեան վերայ հաստատելու հիման վերայ, բնակեցրեց նորան Խազարների հետ միասին Լակզիների երկրի տափարակում, Սամուրի եւ Շապարանի մէջ։

Դորանից յետոյ Մրբվան մտաւ Սարիր երկիրը, յարձակեցաւ բնակիչների վերայ եւ տիրեց երկրի ամրոցներին. Սարիրի իշխանը հպատակեցաւ նորան եւ խաղաղութիւն հաստատեց նորա հետ այն պայմանով, որ նա իւրաքանչիւր տարի 1000 ստրուկ՝ 500 պատանի եւ 500 աղախին, սեւ մազերով եւ յոնքերով՝ նորան մատակարարէ. եւ նա կտրեց նոցա (մազերի) ծայրերը[1]. եւ նա պարտաւորեցաւ 100.000 մ-դ-ա[2] (ցորեն) մատակարարել պետական շտեմարանների համար. Մրբվան առաւ

---

1 Սովորութիւնս խորին հնութեան կը պատկանի. Ասորեստանեայց թագաւոր Շամմուրամի (իբրեւ 2250 Ն. Ք.) իւր՝ նորերս գտանուած՝ "օրինաց գրքում, ճակատի մազերը կտրել տալը ծանր պատիժներից մէկը կը համարէ.

2 Modius. Ասորիքում եւ Եգիպտոսում հնուն գործածելի չափ։